

րը, որոնք յաճախ թերի կերպով նկարագրուած են հայ եկեղեցական պատմութեանց մէջ:

Մեր աշխատութեան ընթացքին նկատի առած ենք մասնաւորապէս աղբիւրները՝ տպագրուած կամ անտպ: Վաւերաթուղթերու մեծամասնութիւնը քաղած ենք Վատիկանի և Հաւատոյ Տարածման դիւաններէն: Հետեւած ենք նաև դէպքերու ժամանակակից պատմաբաններուն և ճանապարհորդներուն վկայութեանց, առանց անտեսելու յետագայ դարերու հրատարակութիւնները:

Այս փոքրիկ երկասիրութեան մէջ մեր միակ դիտումն եղած է երախտաւոր հայրապետի մը կեանքին և գործին վրայ լոյս սփռել:

Զմմառ, Վանք Փոխման Տիրամօր.

17 Օգոստոս, 1952

ՀԵՂԻՆԱԿԸ